

THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.



ՏԻՂՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ՔԱՅ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱՂՔԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 26 ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱՐԱԹ, ՄՍՅԻՍ 7, 1898 ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԻՔ ԲԻՒԳՐԱՅԻ ՄՍՍԻՆ

Քիւլան Բրիտանացի Գլխավոր
իր առաջին ճամբորդութեամբ գտաւ
1492ին: Մեծ նաւավորը անոր բոլոր-
տիքը ճամբորդեց, և Սրանիոյ թա-
գաւորին տեղեկագրեց իւր շքեղապ-
արին երկիրն էր այդ աշխարհի վրայ:
Բոլորովոք չայտատանք տեսած չէր
անշուշտ:

—Տիէկո Վէլտբուէկ 1511ին կղզին
գրաւեց: Այդ օրէ կ'սկսին եղեռնա-
գործութիւնք ու սրանիական խժոճ-
ծութիւնք դժբաղդ, բայց այժմ բազ-
մաւոր կղզիներ մէջ:

—Սրանիա 387 տարիէ ի վեր է կը
տիրէ Բիւլղարի միայն Հաճանայ՝ կղզ-
իներ մայրաքաղաքը, 1862ին Անգլիոս-
ցիներէ գրաւուեցաւ՝ Ամերիկացի կա-
մաւորներով: Բայց քիչ ատենէն Բը-
րիտանիայ մեծ փոխարինութիւններ
ստանալով եւ՛ առաւ Հաճանայ:

—Քիւլան աղբիւր մ'եղած է Սրա-
նիոյ պէտքերէն հոգալու համար ըս-
կիզուէն ի վեր: Կեղեքում ու յափը-
տանութիւնք այնչափ շատ եղած են
հոն՝ սրչափ եղած են թերեւ մեր
երկրին մէջ: Այս անիրաւութիւնք
եղան գլխաւոր պատճառն սեղացի
ժողովրդի շարժմանց:

—Կղզիներ առաջին յեղափոխութիւ-
նը տեղի ունեցաւ 1862ին: Բայց Ըս-
րանիական երկաթեայ ձեռքը ջարդ
ու կտոր ըրաւ ժողովուրդն ու խա-
ղաղեցուց կղզին:

—Քիւլայի ընդհանուր կառավա-
րիչն լիազօր իշխանութիւն ունի՝ ին-
քըն է կղզիի բոլոր օրէնքը: արտօ-
նութիւն ունի Մայր երկրի օրէնք-
ներն ևս անտեսել ի հարկին:

—Քիւլայի տարածութիւնն է 45883
քառակուսի մղոն: Իժուերը գտնուող
մի քանի փոքր կղզիներն ի միասին
հաշուելով: 1890ին ժողովրդին թիւն
էր մէկ ու կէս միլիոնէ քիչ մ'աւել-
լի: Ժողովրդին 95 հարիւրերորդ մա-
սը ճերմակ է, մնացեալը՝ խառնիկ,
մոնղոլ ևն: Հաճանայի ժողովուրդն
է 250,000: Կղզիի նշանաւոր քաղաք-
ներն են, Հաճանայէ գաւ, Մաթան-
գաս, Սանդիակո տի Բիւլայ, Փորթ
Րիսիսիւր ևն: Կղզիին հասարակաց
պարտքն է 135 միլիոն տոլար: Ծա-
րեկան եկամուտը կը հաշուուի 80 միլ-
իոն տոլար: Ուղղակի և անուղղակի
տուրքերն են տարին 25 միլիոնի շափ:

—Կղզիին մէջ կան 777 հասարա-
կաց ու 538 մասնաւոր վարժարան-
ներ: Կրթութիւնն ստիպողական է:
ձերմակներու 35 հարիւրորդը կրնայ
գրել կարգաւ, սեւերու՝ 12 առ հար-
իւրը միայն: Պատերազմէն առաջ Մ.
Նահանգներն տարին 45 միլիոն տո-
լարի շաքար ու 16 միլիոն փափնտ
ծխախոտ կը գնէին Բիւլայէ:

—Քիւլայ շատ պողպատի երկիր է.
կ'արտադրէ շաքար, օղի, պանանա,
ծխախոտ և այլ և այլ տեսակ փայտեր:
Մ. Նահանգ տարին 3 ու կէս միլիոն
նի միս, ցորեն, իւղ ևն. կը վաճա-
ռեն Բիւլայային: Երկաթի և պողպա-
տի գործարանք կղզիէն կը գնէին 33
միլիոնի ապրանք:

—Քիւլայի մէջ 1000 մղոն երկա-
թուղի կայ: 2204՝ հեռագրի թիւն
157 կայարաններով: Կղզիին մէկ
ասաներորդ մասը միայն մշակուած
է. մնացեալներն դեռ խուզարկուած
իսկ չեն: Քիւլայի արտադրութեանց
շարիւրին 96ը Մ. Նահանգացի մէջ կը
փոխառուին:

—Քիւլայ ունէր 22 քաղաք և 204
գիւղ ու գիւղաքաղաքներ: Բայց հի-
մայ ոչ ոք գիտէ թէ ասոնց քանի-
ներն կը կենան կանգուն:

ՀԱՅ ԶԻՆՆԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾ ՄԸ

Յիւստէլֆիայի դեղագործական
վարժարանի Զէի ընթացաւարտներէն
Պ. Մուշէկ Մուրատեան, որ քաղաքին
հայկական դեղարանի հաստատու-
ներէն մին էր, անցեալ օր քննութիւն
անցնելով՝ դեղագործ ընդունուեցաւ
Ամերիկեան դրահանաւի մը մէջ ծա-
ռայելու համար՝ մէկ տարի: Պ. Մու-
րատեան կը մեկնի քիչ օրէն:

ՀԱՅ ԿԱՄԱՆՈՐԵՐ

Անցեալ երկուշաբթի օր Քաղա-
քիւ 12րդ զօրայինին հետ երեք Հայ
կամուորներ ալ մեկնեցան՝ ամերիկ-
եան դրօշակին տակ կուռելու հա-
մար: Այս պարտներն են, Տի-
արք Մարտիրոս Բարսեղեան (Մարտի-
իացի), Լեւոն Հասնեան (Կեսարիացի)
և Կարապետ Մանուկեան (Թալաւացի):
Ասոնց առաջին երկուքը անցեալ Կի-
րակի օր խոստովանեցան ու Ս. Հա-
ղորդութիւն առին Ս. Ոսկերեան
եկեղեցիին մէջ:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ
ՀՈՒՐԵՐ

Ապրիլ 29-30

—Քէյփ Վէրտի սրանիական նա-
ւատորմի ճամբայ ելաւ կնքեալ
հրամանի տակ: Կը կարծուի թէ ա-
սոնք Բիւլայ պիտի գան՝ պաշարու մն
վերցնելու համար:

—Փորթուկալ իր շեղագրութիւնն
յայտարարեց վերջապէս:

—Ժէնէրալ Կրանդի որդին, Յրէտ
Կրանդ 19րդ զօրայինի հրամանա-
տարութիւնն ստանձնած է:

—Նիւ Փորթ գրահանաւը եօթը
Սպանիացի լրտեսներ բռնեց ու Բի
Ուէսթ բերաւ:

—Անցեալ Հինգշաբթի գիշեր Նիւ
Եօրքի նաւահանգիստը վերջի 35 տա-
րիներուն մէջ առաջին անգամն ըլ-
լալով, մթութեան մէջ պահուեցաւ,
և այդպէս պիտի պահուի՝ մինչև որ
պատերազմը լինայ:

—Սպանիայի լրագիրներն կը գը-
րեն թէ Մաթանայի բերդերու ուղմ-
բակոծութիւնն վնաս մը յառաջ բե-
րած չէ բնաւ, միայն ջորի մը սպան-
նուած է եղեր: Թրքական սուտ:

—Հէլէն Կուլտ, ձէյ Կուլտի աղ-
ջիկը 100 հազար տոլար սուաւ կառա-
վարութեան՝ պատերազմական ծա-
խուց համար:

—Աւաշինկի ընդ կառավարութիւ-
նը ութը մեծ փոխադրանաւեր վար-
ձեց երեսուն օրի համար: Ասոնք ա-
մերիկեան բանակը՝ զրահանաւերու
հոկոթութեան տակ՝ Բիւլայ պիտի ըս-
կիրին փոխադրել, կղզին գրաւելու
համար:

—Մ. Նահանգացի Բոնկրէսը 47
միլիոն տոլար քուէարկեց 3 նոր մար-
տանաւ, 4 զրահաւոր, 12 թօրիխա-
նաւ և 16 թօրիխանաւ կործանող
չողանաւեր կառուցանելու համար:
Կըսեն թէ 1906ին Ընքըլ Սամ ծովա-
յին առաջնակարգ պղզաց ցանկին
մէջ նշանաւոր տեղ մը պիտի գրուէ:

—Յէրնատէզ անուն սպանիացի
մը, որ յաջողած էր Փիւրիթըն գրա-
հանաւի մէջ կրակ վառողի պաշտօն
վարել՝ տարբեր անուան տակ, իբր
լրտես ձերբակալուեցաւ անցեալ օր,
ու անմիջապէս դատուելով գինուո-
րական ատենին մը առջև՝ մահուան
դատապարտուեցաւ: Լրտեսին նպա-
տակն էր գրահանաւը օդը հանել՝
մթրանոցը պայթեցնելով:

—Փարիզէն հեռագրի մը կը ծա-
նուցանէ թէ Գաղղոյ մէջ պատե-
րազմական մեծ պատրաստութիւններ
կը տեսնուին: Զրահանաւք կուռելու
պատրաստ դրից մէջ են: Ծովեզրեայ
բերդերուն մեծ քանակութեամբ ազ-
մամթերք զրկուած է: Այս լուր մտա-
տանջութիւն կը պատճառէ հոս:

—Սպանիացի լրտեսներ կը վստան
ամէն կողմ. կառավարութիւնն մեծ
մտահոգութեան մէջ է այս մասին:
Կ'ըսուի թէ Բալիֆօրնիայի և ձըր-
զիի մէջ վերջի օրեր պայթող վա-
ռօղի գործարաններն անոնց ձեռքով
օդը ելած են:

—Գանձային գործոց նախարարը
Քաղաքի մէջ կարգադրութիւններ
ըրաւ դրամատիրացի հետ կառավա-
րութեան հանելիք արժեթուղիներու
վաճառման մասին: Դրամատուներն
կուզեն բոլոր արժեթուղիներն գնել
ու յետոյ մեծ շահով ժողովուրդին
վաճառել զանոնք:

—Աւստրիական կառավարութիւ-
նը որ խոստացած է չէզոք մնալ,
ձեռքի տակէ ածուկ կը վաճառէ Ե-
զեր Սպանիոյ:

—Նախագահը 125 միլիոն կամա-
ւորի կոչում ըրած էր վերջերս փո-
խանակ 125ի՝ 400 միլիոն անձինք պա-
տասխանեցին նախագահի կոչման:
Կ'ըսուի թէ մերժուողներէ շատեր
լալով ետ դարձեր են՝ Հայրենիքին
ծառայելու բաղդ չի կրնալ ունենալ-
նուն համար:

—Նիւ Ինկլընտի ծովեզրեայ քա-
ղաքներու մէջ նորանոր բանտեր կը
կառուցուին՝ սրանիական գերիներ-
րուն համար:

—Մատրիսէն կը լսուի թէ ամե-
րիկեան Սարանաք շողենաւը գերի
ինկած է Մանիլայի մօտերը:

—Հոլանտ ընդժողից շողենաւը
Բիւլայ երթալէ առաջ քանի մը փոր-
ձեր պիտի ընէ՝ Նաւահանգաւոր մէջ՝
իրական թօրփէլոններ արձակելով:

—Ընքըլ Սամ Պրազիլիոյի համար
չինուած 60 հատ թօրփոտներ գնեց:

—Պէյոնէ (Գաղղիա) և Լոնտոնէ
քաղաւած հեռագրիներն կ'ըսեն թէ
քանի մ'օրեր առաջ երկու նաւատոր-
միղներ մեկնած են Սպանիայէն դէ-
պի նոր աշխարհ՝ ամերիկեան հիւսի-
սային նաւահանգիստներն ուժակոծե-
լու համար: Հեռագրին կը յաւելու
թէ սրանիական մայրաքաղաքին մէջ
անհամբեր լուր կ'ուպատուի այս
մասին ամէն օր: Նաւային նախարա-
րութիւնն անհաւանակաւ կը գտնէ
այս լուրը:

Մայիս 2

—Երէկ (Կիրակի) առաւօտուն կա-
նուալ, Սաղազականի ամերիկեան նա-
ւատորմի Յիւրեան կղզիներն հա-
սու ծովակալ Տուվիի հրամանատա-
րութեամբ: Մանիլայի նաւահանգիս-
տին մէջ թշնամիներն իրարու հան-
դիպելով՝ սոսկալի կուռն տեղի ու-
նեցաւ, որ տեղեկ իբր երկու ժամ:
Ծովակալ Տուվիի ճարտար հրամա-
նատարութեան տակ ամերիկեան մար-
տանաւք փառաւոր յաղթանակ մը
տարին՝ ոչնչացնելով Սպանիոյ նա-
ւատորմի ռեբրերն, որք շարունակ կրակած
են՝ առանց արգիւնքի: Ծովակալ
Մոնթիօյի նաւերէն ոմանք ընկղղ-
մած, ոմանք այրած և քանիներն
պայթած են Ամերիկայի հրաչէկ ուռ-
բերուն տակ: Կեանքի կորուստը մեծ
եղած է, թէև մանրամասնութիւն-
ներն կը պակասին տակալին:

—Նոյն սոսկալի կուռնի մէջ Լա-
բանիացիք, կըսուի թէ, իրենց նա-
ւերէ մի քանիս իրենք ընկղմեցուցեր
են, որպէս զի մի՛ գուցէ թշնամիի
ձեռքն գերի իննան:

—Ամերիկեան նաւատորմի իր
փնտնելը դարմանելու և վիրաւոր-
ներն ծովեզրը հանելու համար վա-
ճառականական օտար նաւերու ետև
ապաստանած է քիչ մը ատեն: Բեր-
դերէն այս պահուս կրակել սկսած
են, ու Ընքըլ Սամ նորէն բացը ելնե-
լով շարունակած է կուռը աւելի
ու ժգնութեամբ:

—Ծովակալ Տուվիի նաւատորմի-
ղը ունի 10 այլև այլ կարգի նոր նա-
ւեր՝ 122 արգի թնդանօթներով, իսկ
սպանիականն՝ ունի 13 հին նաւեր 96
հին թնդանօթներով. առաջնոյն զօ-
րութիւնը թէև աւելի մեծ, բայց
վերջինն, բերդերու օգնութեամբ,
հաւասարակուցութիւն ունի եղեր ա-
մերիկեանին հետ ճակատամարտի ժա-
մանակ:

—Երոպական մամուլն կ'ըսան-
չանայ Տուվիի ցոյց տուած մեծ կա-
րողութեան վրայ, որ յաջողած է
թօրփիւններու բազմութեան մը մէ-
ջէն անցնել անփետու և յաղթել թըչ-
նամիին իւր իսկ ջուրերուն մէջ:

—Երոպացիք սկսած են հաւատալ
թէ Ընքըլ Սամ դրամ գիղեղէ գաւ
կուռիլ ալ գիտէ եղեր, և յաջողու-
թեամբ կուռիլ՝ աննպաստ պարա-
զաներու տակ անգամ:

(Շարունակութիւն 3րդ երես)

ԱՐԿԱՐ ԲՈՂՈՔ ՄԸ

Մենք Պօսթօնիցներս ոչ թէ միայն որրերու համար եօթնեակներ շկալ մեցինք, այլ և այն թշուառ որրերու նկատմամբ եղած գեղատիկությունը էմ իսկ շքարագեցինք: Ամեն ոք կը յիշէ թէ Տիկին Աթէշեան 2 1/2 տարեկան Պօսթիցի Հայ Բարեփրայ Ընկերութեան: Տիկին և Տ. Օ. Աթէշեան յայտարարեցին ժողովներու րեմէն թէ այս երեկոյթի հասցիները մէկ երրորդ բաժինը Հայաստանի թըշուառ ու անկարկից որրերուն պիտի յատկացնենք: Այդ օրէն սկսեալ «մինչև ժամանակ մը», ամեն կողմէ ու ամեն անկիւնէ՝ գովասանքի ու երախտագրութեան խօսքեր կը լսուէին Տիկինի ձեռնարկին համար:

Ապրիլ 23, Ծարաթ երեկոյ Հայ Բարեփրայ Ընկ. եռամսեայ ընդհանուր ժողովոյ մէջ նոյն ընկերութեան անդամներէն մին յառաջ բերաւ այս խնդիրը: Մտկայն ցաւալի է ըսել որ մի քանի անձնաւորութիւններ և Բարեփրայ ընկ. վարչութեան մի քանի անդամներ կը հակառակէին անպաշտպան որրերու արդար իրաւունքը Իրենց վերադարձնելու, աւարկելով թէ ընկերութեան ներքին կանոնադրութեան համապատասխան չէր, և թէ Տիկին և Տիար Աթէշեանի յայտարարութիւնները պաշտօնական չէին՝ առանց խորհելու թէ Տ. Օ. Աթէշեան այն ընկերութեան նախագահն է, և Տիկին Աթէշեան վարչութեան անդամներէն մին, և նոյն իսկ այդ բարի ձեռնարկը յղացած էր վերջնական Տիկինը: Սակայն կը ցաւելնք ըսելու թէ որրերու այդ հաշիւը դեռ չի մաքրուեցաւ: Տ. Կ. Թ. Ապրիլ 26, Պօսթօն

ՊԱՏԵՐԱԶԻՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Կըսուի թէ Ռուսիայ պիտի միջամտէ՝ խաղաղութիւնն հաստատելու համար, սրբէն զի մի գուցէ պատերազմն եւրոպան ալ բռնկուցնէ և առիթ ապ Սեղիւրի և Մ. Նահանգաց նիզակահեցութիւն մը կազմել:

—Մտորիտէն կը հեռագրեն թէ սպանիական վեհաժողովը որոշած է կառել մինչև վերջի շուրջ: Նախարարական տաղմուսք մը կը վարչուցի: Քաղաքը վիճակագրական օրէնքի տակ զբուսած է՝ հաւանական յեղափոխութեան առաջն աննկու համար:

—Մանուկ թագաւորի կառավարութիւնն որոշած է իր բոլոր պատերազմանաւերն ի մի համախմբել և ջանջախիչ հարուած մը տալ Մ. Նահանգաց Ազգայնական ուղիկանու վրայ:

—Արեւմտեան հեռագրական ընկերութիւնն լուր կուտայ թէ Մանիլայի հեռագրական թիւը կարուած է Երեք օրէն հազիւ կարելի է լուր առնել Ֆիլիպինան կղզիներէ:

—Ծովային զորքոց նախարարութիւնն 30000 զօրք, պաշար և սազմամթերք պիտի գրիէ Մանիլա՝ ծովակալ Տիւրի յօգնութիւն:

—Այսօր հրատարակուած է թէ Նիւ Եօքս նաւահանգստի ամրութեան համար վերջի քանի մը շարքներուն մէջ 6 միլիոն տոլար ծախք եղած է: Կըսուի թէ ու է նաւատորմի զամրակարկելու շէ մօտենալ ըսպանացէն Նիւ Եօքսին:

—Սէնթ Փօլ, որ կը գրահաւորէր ի Ֆիլիպինայի, ճա՛րաց ելաւ՝ իր նոր պաշտօնն կատարելու համար իր օժանդակ զրահաւոր:

—Աւալինիթերի անդղիական գեւապանը կանչուած է Լոնտոն. անոր տեղ Անգլիոյ բարձրագոյն պաշտօնեայներէն մին պիտի գայ հոս՝ թագուհիի կառավարութիւնն ներկայա-

յնելու համար: —Վաստակի ազդեցնելէ լուր եկած է ծովային նախարարութեան թէ Քէյփ Վէրտի սրանիական նաւատորմի Փօրթօ Րիքօ զնացած է՝ առանց կասկածի: Անհամբերութեամբ սպասուած լուր մ'էր այս, վասն զի եթէ ստոյգ ըլլայ, սրանիացի խորուհեւով՝ լաւ պատրաստուած ամերիկեան թակարգի մը մէջ բռնուած պիտի ըլլան: Երբ ամերիկացիք Համանան պաշարեցին, մասնաւոր նպատակաւ Փօրթօ Րիքօն բաց պահուեցաւ, որպէս զի սպանիական նաւերն՝ Համանայ գալէ առաջ հոն երթային՝ իրբըր ապահով վայր՝ պաշար առնելու և վերջնական պատրաստութիւններ տեսնելու համար: Կը հեռագրուի սակայն թէ ծովակալ Սամուելի նաւերն ճամբայ ելած են այժմ, հաւանականաբար՝ Փօրթօ Րիքօ երթալու համար, և հոն ի հարկէ անհամբերութեամբ պիտի սպասեն Քէյփ Վէրտի քաղաքը գալտանան՝ իւր ընդունելութիւն մը տալու համար անոնց:

—Ֆիլիպինան կղզիներու շրեքէն Հօնկ Գօնկ զնացող շոգենաւ մը լուր տուած է թէ Մանիլա անձնատուր եղած է վերջապէս ամերիկեան ամրամակն: Կղզեաց ընդէ՛ հրամանատարը յանձնուելէ առաջ հեռագրական թիւերը կտրած է, անանկ որ 48 ժամէն առաջ մանրամասնութիւններն անկարելի է լսել: Նոյն շոգենաւը պատմած է թէ ամերիկացի պաշտօնեայք և յեղափոխականք ի միասին մի առժամանակեայ կառավարութիւն կազմած են Մանիլայի մէջ:

ՔԼՈՆՏԱՅՔԷՆ ԼՈՒՐԵՐ

Յրէջնօ 20 Մարտ, 98 Փետր. 20 թուականաւ նամակ մի ստացայ դարձեալ՝ Քլոնտայք գտնուող բարեկամէս, որոյ պարունակութիւնն գրիթէ առաջին նամակին կրկնութիւնն է ուկուց հանքերու մասին, որ մի համառօտ քաղաքած մի ընկաւ աւելորդ չէ՛ համարիր:

...Քլոնտայք-Տիսթրիքթի մէջ զբուսուած բոլոր հանքերուն հարկերին տասը մտոյն կը վճարէ վրան աշխարհ, որոնք ամենքն ալ սեփականուած են: Անցեալ աշնան երբ շատեր հոս հասան, վազեցին Քլէյմ մի ունենալու կամ ուրիշի մը Քլէյմին վերայ բաժինով աշխատելու: Ասոնք շարունակ հինգ ամիսներ շարաշար աշխատելէ վերջ՝ բան մը չը գտան ու սկսան ուրիշ գործ մտնուել: Հիմայ վերջին ծայր ինչոյցութեամբ կը գործածեն իրենց պաշարն՝ մինչև զարուս, որ առնեն ես պիտի դառնան ձեռնուսայն ու քանի մի ամսուան մէջ 10 տարի շափ Երեքացած: Այս անձանց անձքն ու առելութիւնը՝ ամերիկեան թիւթերուն և անոնց յօդուածներուն դէմ, ստիպալի է՝ առնել քանի մը քան, կ'ըսեն, այս բոլոր թշուառութեանց՝ իրենց շարքուցիչ տեղեկութիւններովն: Հինգ վեց ամիսներ առաջ երբ երկրորդ գեռ «փրօսիթթ» եղած չէր, ամենուն ալ կարծիքն այն էր թէ՛ այս բաժնի վերայ գործողները 7-8 ամսուան մէջ պիտի շինեն իրենց լազարն. բայց փորձը չը հաստատեց այդ ենթադրութիւններն: Արպէս զի բոլորովին յուսուած ու միայն դէ՛ կողմերը ցոյց տուող չը համարուիք զիս, ահա քանի մի շլացուցիչ ծանօթութիւններ ալ գրեմ. թէ և խիստ քիչ, բայց կան հարուստ հանքեր, որոնք շափի դուրս ոսկի կ'արտադրեն. ասոնցմէ ոմանք մէն մի «փէնն» (սոկի լուրու աման) 200է 500 տոլար կ'ուսան. երբեմն այնպիսի «նըկէթ»ներ կը գտնուին, որ ապշութիւն կը պատճառեն. երկու ամիսի շափ առաջ «նըկէթ» մը գտնուեցաւ որ 5 լիպայ կը կռէր. կան քանի մի հանքեր ալ որոնց

մէջ 200 տոլարի արժողութեամբ նըկէթներ գտնուին հաղուալու բաներ չեն... և ահա հոս է դժբաղդութիւնը. այսպիսի իրողութիւններն են զմարդիկ հրապուրողն ու փորձութեամբ մէջ ձգողն. բայց մասնաւոր է թէ 1-200 մարդոցմէ մին հազիւ բազմ ունեցած է. ու մնացեալներն թշուառ, խեղճ ու անօթի կը թափառին այս հրախային ստանամանաց մէջ ենթակալ ըլլալով սովամահ կամ ստիպալի հրահարութիւններով կորնչելու:»

«Նեղ ու անտանելի կեանք մ'ունինք հոս. բնական խրճիթիս մէջ՝ որը մէկ սենեակ է միայն՝ հինգ անձ կը բնակիմք, ուր կ'եփենք, կուտենք ու կը ննջենք. կատարնալ աղանդութեան բոյն մը որն որ չէ կարելի նկարագրել. ժամանակ չունիմք մաքրելու կամ ամեն բան իր կարգին պահելու: Մութին կ'երթանք գործի, և մութին կը վերադառնանք. հազիւ ժամանակ կունենանք մեր փայտը ջարդելու, սառը հալեցնելու և կերակուր պատրաստելու (Չոր ունենալու համար գետին սառը կը ջարդենք ու պարկերով կը բերենք մեր խրճիթին կրակին վրայ հալեցնելու). մեր հագուստին ու գուրջայներու ամեն մէկ մաշուածն ինձմաբով կարկտելու ստիպուած ենք, քանզի նորը չիկայ որ զնենք ու հինը մէկ կողմ ձգեմք: Մեր ճրագն չափաոր կամ կամ վերջին ծայր ինչոյցութեամբ կը գործածենք որ նոր կը պատրաստենք մեր ապուխտը հալեցնելու: մոմ չունինք բնաւ: Պաշարներու մէջ մի լիպային գինը այժմ 1 1/2 տոլարի հազիւ կարելի է գտնուի: Անպատմելի է այս տեղի թշուառութիւնը. պաշարի պակասութիւն, անգործութիւն ու ասոնց վրայ աւելցուող հրահարութիւն, սրոց դարձան գտնել անկարելի է այս ցուրտ ու վայրենի երկրին մէջ. դեղ չկայ, ուսելիք չ'կայ ու երկրէն գուրս ելնելու միջոց չ'կայ. դիւրին է երևակայել թէ այս ամենու վտխձանն է անխօստափելի մահ:»

Յ. Մ. Նշիկեան
ՌՈՒՄ ՈՉԵՉԱՅԻՆԱՅ ԴԱՍԱՍՏԱՆԻ
ԱՆԳՆՈՅ ՄԷՋ
ՄԱՄՈՒԼԻ ԱՋԱՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԸ
(Շարունակութիւն)

Լօրտ Բօլրի ճանկէ վերջ պատմեց Պարձէվի Սիպրիայէն փախուստը, Պուկարիայէն ալ ձեռքազուտելու վայրկեանին՝ անգլիական շոգենաւ մը փախչելով ազատուիլը և Անգլիոյ գալը, և ըսաւ թէ, այդ ժամանակէն ի վեր Ռուս կառավարութեան քործակալները կը ինչային որ կերպով մը գինք բանտարկել տան: Փաստաբանին խօսքերը ծափահարուեցան շուկից բաց կողմէն, բայց դատաւորը սնմիւրապէս դադարեցուց ծափահարութիւնը:

Դատաւորը, դատին ամփոփումը ընկալով, ըսաւ թէ՛ խնդիրը կը կայանար այս կէտը որոշելուն մէջ, թէ հրատարակութիւնը անձերու գրողում կը պարտնակէ՞ր Ձաքը սպաննելու: Գրքոյիցն այլ և այլ հաստատման ի մէջ բերաւ, որոնցմէ մէկին մէջ ըսուած էր, «գործունէութեան յատակագիրը կրնայ ամփոփուիլ միակ կէտի մը վրայ—արքայապանութիւն— և, եթէ հարկաւոր համարի, արքայապանութիւններու ամրապիշ շարք մը և շարունակական քաղաքական տէրօրիզմ»: Դատաւորը համոզուած էր թէ գրուածները անհաստատ գաղափարի պարզ արտայայտութիւն մը չէին, այլ գրքուող, թիւագրող, քաղաքական հանգամանք ունէին: Նաև աւելցուց, «կընդունիմ թէ կարծիքը ազատ է այս երկրին մէջ, բայց եր-

բեմն գոյն արտայայտելը կրնայ վնասակար դառնալ»: Երբ ունեւ զատաւորները խորհրդակցութեան սենեակը քաղաքացան, և կարճատե բացակայութենէ վերջ վերադարձան տանն: Դատաւորը արտասանեց վճիռը որով Պարձէվ 18 ամսուան սաժանակիր աշխատութեան դատապարտուեցաւ. իսկ Լեհացի սպագրիչը՝ 2 ամիս բանտարկութեան:

Պարձէվի դատաստանին առթիւ անգլիական թերթերէն ոմանք խրճարագրականներ գրած են:

«Տէլի Թէլէկրաֆ» կը գրէ. «Այդ անձերը պէտք է ինքզինքնին բաղդաւոր համարին որ դատաւանան անանկ երկրի մը մէջ որ իր արդարեւթիւնը կը բարեխառնէ գթութեամբ: Մեր ազգային սոսկիականութեան օրէնքներուն դէմ սակէց աւելի բացայայտ յանցանք մը գործուած չէր երբէք: Բոլորովին աններելի է որ այս կարգի մարդեր մեր մէջ իրենց վայելած ազատութիւնը շարաշար գործածեն քաղաքակրթութեան թիւն, դատաւանութիւն և սպաննութիւն. և բարեկամ երկրի մը ինքնակալը մատնանիչ ընկաւ իրր առարկայ մարդտապանին մոլեգին եղևնագործութեանը: Մեր օտար քննողատները շատ կը պարտաւեն մեզ ուրիշ երկրներու վնասակար ատարներուն մեր մէջ գտած սպասութեանը համար: Թէպէտ այդ քննողատութիւններուն պատճառաւ մեր օրէնքները փոխելու հարկ մը չենք տեսնիր, բայց իրաւցնէ շատ մեղադրանքի արժանի պիտի ըլլայինք, երբ այսպիսի բացայայտ յանցանք մը անպատիժ անցնէր: Անոնք որոնք չեն հասկնար ազատութեան իրական գործածութիւնը, պէտք է զգացնել թէ անիկա իրեն հետ կը բերէ պատարկանատուութիւններ ալ: Երբ մարդ մը Անգլիա կուգայ, իրր ազատ քաղաքացի մը կը նկատուի, բայց իր իրաւունքները ենթակայ են խիստ պայմաններու: Եթէ օրէնքի չորս անկիւններէն գուրս չեկէ, ազատ կը թողուի, բայց երբ դատաւանի կամ մարդասպանի մեքենայութիւններու մէջ գտնուի, Անգլիոյ մէջ չ'կայ ձայն մը որ բարձրանայ իր յանցանքին համար գտած արժանաւոր դատապարտութեանը դէմ»: Ծարունակելի * * *

ԿՈՐՍՈՒԱՑ ՄԷԿԸ

Պօսթնի Բարեգործական Ընկերութիւնն կը խնդրէ ընթերցող ժողովուրդէն որ բարեհաճին իրենց հազարդէլ Պօսթիցի Պ. Համբարձումի թիւթի ճանին հասցէն, գրաւումն են:

Յիշեալ անձը առնէ մ'իվր Գիլիպպէ հաստատուելէ վերջ՝ Ձիքակոյի արուեստահանգէսին ժամանակ Մամերիկայ գաղթած է և երկար ժամանակ իւր մօրն ու եղբորն Պր. Բիւզանդ իւթիւնեանի մէջ կսկիծ ու մասհոգութեան պատճառ եղած է իւր կամայ կամ սկստայ լուրթեամբըն:

Տեղեկութիւնք շնորհակալութեամբ կ'ընդունուին Պօսթընի Հայ Բարեփրայ Ընկերութեան կողմէ Լրագրոյ Սեղագրութեան միջոցաւ:

Մեր Պրայթընի գործակալն է Տ. Մ. Կալուստեան, 301 Ուէսթըրն Ավի:

—Տէ'ր Հայր, ինչո՞ւ Տիգրանի պատկէն այնչափ քիչ վարձաւ սուրթիւն ընդունելիր:

—Որովհետեւ այս երկրորդ անգամն է որ կը վճարէ, սղաս:

Տքիթօրը — Քեզմէ հայտարարուի պիտի առնեմ: Չիւանդը — Ի՞նչ, արիւն, որտեղից է արդեօք: Տքիթ. — Մի՛ վախար սիրելիս, քսակէդ: ՍՈՒՆ

ՏԱՃԻԿ ԸՄԲԻՇԸ Ի ՆԻԻ ԵՈՐՔ

Իւսուֆ Թիւրք ըմբիշը, որուն Թէրրիպը Թըրք անունը կուտան լը-րազիրները, անցեալներն կուտեսցաւ Մատիւրն Ըսգուէր կարտընի մէջ Գերմանացի Համբաւաւոր ըմբիշին Բէօլլըրի Հետ: Տաճիկը՝ Հակառակ օ-րէնքի՝ Գերմանացին հրելով Թատե-րարեմէն վար ձգեց, որով վերջինս փախուցաւ մի քիչ, ու բժիշկներն արգիւնցին իրեն շարունակել կռիւը: Անցեալ Կիրակի երեկոյ այս երկու անձեր նորէն կուտեսցան Մէթրըփօլի-թըն Թատրոնի մէջ՝ ի ներկայութեան 5000 ի չափ խուռն բազմութեան: Իւսուֆ շի կրնալով յաղթել Գերմա-նացիին, բարկացաւ, ներքնաով (թա-պան) հարուածել սկսեց Գերմանն: այս վերջինս զայրացած կուտեսցաւ այս տարօրինակ ձեւէն՝ բռնցիով պատա-խանեց Թուրքին: վկաներն մէջ մը-տան և սկսեցին բռնցիկով զրար: Ոտակիւնութիւնն վրայ հասնելով բաժնեց պատերազմողներն ու խա-ղաղութիւնն վերահաստատուեցաւ: Գեռ կարելի չէ հաստատապէս ըսել թէ այս երկու ըմբիշներու սրն աւելի ճարպիկ է իր արհեստին մէջ: — Թէ և կ'ըսուի թէ Գերմանն կա-րող է յաղթել Սուլթանի ըմբիշին՝ եթէ այս վերջինս օրինաւոր կերպիւ յանձն առնէ կռուիլ:

Ա Ձ Դ

Սերասարկոյ Երասար գիւղացի Նը-շան Տօնեկեանը որ 96 թուականին Կ. Պօլսէն փախչելով՝ Վառնայի մէջ կ'աշխատի եղբր, այժմ անյայտ է և իրեալ անձին եղբայրը կը խնդրէ ով որ գիտէ իր եղբոր ուր ըլլալը իրեն իմացնեն:

385 Ուէսթըրն Ալիւի Պրայթըն, Մէսս. Ամերիկայ

Մեղքն ձանաթեանի, Յ. Ահարօն-եանի և Յակոբ Ահարօնեանի հասցե-ներն կ'ուզուին. գիտցողներէ կը խնդրուի իմացնել իմբազրութեանս: Այս Պարոններն ընկերութեամբ Նիւ Ղէյվընի մէջ գործ կընեն եղբր:

Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ճ Ա Ռ

ՊՈՂՈՍ Մ. ԳՈՒՅՈՒՄՃԱՆ 23 կրին Փողոց, Ուսթըր Մասս Ուրիշ տեղ մի նայր կոշիկի հա-մար, մեր քով կը գտնեն ճաշակիղ յարմար: Պատիւ ունիմ յայտարարելու ար-գոյ Ազգայնոց որ Չատկուայ առթիւ ամեն կարգի կոշիկներ պատրաստած եմ, (կարանց, կանանց, աղայոց և աղջկանց) համար: 98ի վերջին մտային գեղեցկա-գոյն կոշիկներ: Նմանը երբէք չ'ըսուած գներով:

Հ Ե Ր Չ Օ Լ ՄԱՍԻ Ի Դ



A HAIR FOOD FEEDS, STRENGTHENS, CLEANSES AND ADJUSTS THE HAIR. DESTROYS ALL DISEASES OF THE SCALP AND REMOVES DANDRUFF. IT NEVER FAILS! BEWARE OF IMITATIONS. MANUFACTURED BY H. KOORIE & CO., New York.

Կը մարտի քո-րը գեղազործնե-րուն քով: Գին 50 Սէնթ միայն: Կարելի է ստանալ նաև Հայկա-կան Կեղտարանէն — Ի Թիւ 472 Յրդ Ալիւի, Նիւ Եորք:

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Ք Ասլանեան և Ուսլիկեան 317—Իսթ 45րդ Փողոց


Մաքուր, աժան, տեղական և Ա-րևելեան ապրանքներ: Կը ծախենք նաև շայրիէ. պուլըուր ևն:

ՀԱՅ ՀԱՎԱՆ ՃԱՇԱՐԱՆ 27 Նիւլընտ Փողոց, Պոսթըն, (Երկաթուղեաց կայարանին մօտ) Պոսթոնի ամենէ աւելի յաճա-խորդ ունեցող ճաշարանն է այս: Գիններն չափաւոր են. կերակուրներն համեղ ու մաքուր: Պատրոններ կ'ըն-դունուին համեստ շարձով: Գաճաղորուած սենեակներ: Ճաշարա-նի մէջ հաստատուած կայ նաև փուլ թէյպլը:

Յ. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ Թիւ 628 Յրդ. ԱՎԸՆԻԻ, ՆԻԻ ԵՈՐՔ



Գարնան համար մեր ստացած տե-ղական և Եւրոպական նոր ապրանք-ներն անկարելի է գնի մասին մըրց-ման ենթարկել ու բիշներու հետ: Մեր երկար փորձառութիւնն ու ար-հեստին մէջ ունեցած հմտութիւնն ապրանքներու տեսակին հետ միացած կ'երաշխտուորեն այնպիսի հազուա-տու է:



ներ, որք չեն կրնար գերազանցուիլ: Փորձ մը բուսական է զբեղ հա-մողելու համար: Հայ յաճախորդներէն եղած շա-հու հարիւրին տասը պիտի յատկանայ Բարեգործական Ընկերութեան: Ուրիշներու երթալէ առաջ շա-հուոր է նախ գիմել մեզ: Կը ծախենք նաև առաջին կարգի հեծելանիւններ, շափաւոր գներով:

Երբնա բոլոր ժողովուրդը խաբել քիչ մը ժա-մանակ. բայց բոլոր ժողովուրդը չեն կրնար խաբել ամեն ժամանակ: Եգիպտական ու Թրքական կեռնք սիկարէթ-ներ այնչափ շատցեր են հրապարակին վրայ որ անոնց անկարելի է վստահել: Տեղականները թիւ 52 Թրքիսթի փլէյս, Նիւ Եորք:

Հատ անգամ իբր տաճկական ծխախոտ կը վաճառուի ժողովրդեան: Մենք մասնագէտ ըլլալով այս ճիւղի մէջ, և յեզրկատու ներկայացուցիչներ ունե-նալով լաւ ծխախոտ բերել կուտանք մեր սիկարէթներուն համար, որք զուտ եգիպտական ծխախոտէն չ'իտուած են: Միանգամ փորձեն բուսական է միայն յաճախորդ ըլլալու համար: Կը վաճառուի ամէն տեղ: Կեդրոնատեղիին է 52 Թրքիսթի փլէյս, Պոսթըրի Փառքին մօտ: — Մի՛ մոռանաք անունը. Էնիփշըն Բիւնկ Սիկարէթս: —

Դ. ՊՈՂԻԿԵԱՆ ԵՒ Տ. ԲԻԻՓԷԼԵԱՆ Առաջնակարգ Հայ Սափրիչ 607 — Յրդ Ալիւի, Սովորական գներ, մաքրութիւն և ուշադրութիւն:

ՅԱԿՈՒ ԲԱՐԱԿԱՆ Ամերիկեան և Արևելեան նպարավա-ճառ: Թիւ 45 Էքսչէնճ Սթ. Ուսթըր Կը ծանուցանէ թէ գներու չա-փաւորութեան և նպարիղէններու ըն-տիր տեսակի մասին կը դերազանցէ ուրիշ նպարավաճառներն: Այնթապի հալուէ, լոխում, ձի-թապաուղ և Տիգրանախերտի շարապի հարիր:

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Ճ. ՉԱԼՈՒՄ ԵՒ ՈՐԴԻՔ ՆԵՐՈՍՈՂ ԹՐՔԱԿԱՆ ԱՊՐԱՆԱՑ


Պատիւ ունիմք ծանուցանել ար-գոյ Հայ հասարակութեան թէ վերո-յիշեալ խանութի մէջ կը վաճառենք Շամու, Մըսըրի և Թուրքիոյ ամեն տեսակ ապրանքներ, զօրօրինակ պուլ-ըուր, ծեծած, լոխում, հալվա, խա-վէի տէյրիման և ճէղվէ, նէրկիլէ, թէմպէթի, Հայոց սոգոյային հիւան-դանցի սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ նպարներ ու անուշեղէններ: որ չենք կրնար բոլորն ալ յիշել հոս: Նաև ունիմք ամեն տեսակ պահար-ղէններ: Միտ աժան գիներ: Փորձեցէք: ՉԱԼՈՒՄ ԵՒ ՈՐԴԻՔ 73, Ուաշինթոն Փողոց:

Յ. ԹԱԳԱԳՃԱՆ ԵՒ Պ. ԵՒԱՐԵԱՆ ՀԱՅԿԱՎԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Թիւ 242 Իսթ, 41րդ Փողոց Պատիւ ունին ծանուցանել թէ, այս նոր ճաշարանն բացած են սա վստահութեամբ միայն թէ մաքրու-թիւն և ընտիր խոհարարութիւն միշտ կը գնահատուի հասարակութեան կող-մէ:

Միանգամ փորձելն բուսական է մըստընեանական յաճախորդ ըլլալու:

ՊԱԿԱՍ ՄԸ ՄԵՐ ՄԷՋ Կենաց ապահովագրութեան ամե-նավստահելի Ընկերութիւն մը կը-նեկայացնէ Աղբ. Թ. Տարագճեան: Պայմանք գիւրամտաչիլի են: Լիուի բացատրութիւնք հաճու-թեամբ կը տրուին փափաքողաց: Հասցէ՝ 77 Ուէսթ 11րդ փողոց, Նիի ԵՈՐՔ



ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ 9երորդ Տպագրութիւն Մաքուր Սըմբըվու Հրատարակիչ

Կը բաղկանայ 25 մեծագիր հա-տորներէ, որք կը վաճառուին բաժա-նորդագրութեամբ միայն: Սոցա գինն է, Կտակայ կազմ 62 տու. 50 սէնթ Կէս կաշխակազմ 87 " 50 " Փասակազմ 100 "

Առաջին տեսակէն կը զրկուի ա-նոնց որք յանձն կուտան վճարել ամի-ւր 2 տար 50 սէնթ: Երկրորդին ամ-սովճարն է 3 ու կէս տար, իսկ վեր-ջինին՝ 4 տար: Այս Համագիրտարանն Ամերիկեան միակ արտօնեալ ապագրութիւնն է. մնացեալք անկատար են ամեն կերպով: Մանրամասնութեանց համար գի-մել իմբազրութեանս:

Հաստատուած 1854



ՅԱԿՈՒ Խ. ԽԷՐԳԷԿԵԱՆ (Ներկայացուցիչ) ՈՒԻԼԻՐՄ Պ. ԲԻՕՂԸՐ ԵՒ ԵՂԲԱՐՑ, Վ Ա Ճ Ա Ռ Ա Վ Ա Ն Ք Գինի, Օղի, ոգիւից Ըմպլեանց Թիի 202, 204 ԻՍթ 29րդ Փողոց Նիի ԵՈՐՔ, Ն. Ե.

Պատիւ ունի ծանուցանել արգո-հասարակութեան թէ իւր վաճառած ըմպլեաններն ոչ՝ միայն փորձեալ և անխաղախ են, այլ և դերամատչելի են ամէն գասակարգի անձանց: Այս վաճառատան մէջ կը ծախ-ուին Եւրոպական, տեղական, Բայի-ֆորնիաի և տաճկական ամէն տեսակ ուրբի, օղի, գինի, շամբանիա, մաս-թիւր, գարնալուր, պրանի, ափսի՛ս և այլն, իրենց ամեն տեսակներով: Փափաքողաց գներու ցուցակը զրկուի առանց ո՛ր և է ծախքի: Յանձնարարութիւնք կը կատար-ուին ամենայն ճշգրութեամբ և փու-թով: Բաղաքին մէջ ապրանքներն ձրի կը զրկուին, իսկ քաղաքէ դուրս զրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է: Ըմպլեաններ կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօլմէյլ անա-րիթէյլ) Մեր յաճախորդք երբ չի հաւնին իրենց գնած ըմպլեաններուն, յանձն կուտանք զայնս փոխել, եթէ պակ-սած ու փաստուած չ'ըլլան: Ըմպլեաններ կը վաճառուին չի-չով, կալընով, տակառով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշիք: Դիմել յիշեալ հասցէին կամ Ե. Խ. Խիւրգիւիէլի, 535 ՈՒԻԼԻՐՄ 57րդ Փողոց, Ն. Ե.

EGYPTIAN KING CIGARETTES.



Կհիմա բոլոր ժողովուրդը խաբել քիչ մը ժա-մանակ. բայց բոլոր ժողովուրդը չեն կրնար խաբել ամեն ժամանակ: Եգիպտական ու Թրքական կեռնք սիկարէթ-ներ այնչափ շատցեր են հրապարակին վրայ որ անոնց անկարելի է վստահել: Տեղականները թիւ 52 Թրքիսթի փլէյս, Նիւ Եորք: